

239



Armenian Church Of Our Saviour

Ս. ՓԻՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՌԻՍՏՐԻ

Rev. Father Aved Terzian
Pastor

Մարտ 15, 1988

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան, Առաջնորդ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի
Նիւ Եօրք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

ՍուրբՓրկիչ Եկեղեցւոյ տարեկան ծխական ժողովը զուամրուեցաւ Կիրակի,
~~Փետրուար 7~~, 1988 յաւարտ արարողութեանց ժամը 10:45ին 113 տրատու անդամներու
մասնակցութեամբ: Քուէարկութեան մասնակցեցան 192 տրատու անդամներ: Եկեղեցւոյս
տրատու անդամներուն թիւն է 551:


Օրինաւոր կերպով կատարուեցան ծխական խորհուրդի, Ընտրողական Յանձնախմբի
եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութիւնները: Ծխական խորհուրդին վերընտրուեցան
Տիարք՝ Կէրի Յովհաննէսեան՝ 168՝, Մարտիրոս Մուշակեան՝ 96՝ եւ Օր. Մէրոլին՝ 140՝
Մարգարեան. իսկ նորընտիր անդամներն են՝ Տիարք Էտտուրտ Աղամեան՝ 130՝, Կէրի
Տէկրեմէժեան՝ 114՝ եւ Օր. Կլատրս Նորտիկեան՝ 97՝: Յաջորդ առաւելագոյն քուէ
ստացած անձն է Պրն. Զարեհ Մարգ Մարգարեան՝ 87՝:

Համաձայն Առաջնորդարանէն ստացած մեր ուղղութեան, հաճեցէք նաեւ ներփակ
գտնել Եկեղեցւոյս Տեղեկագիրներու Պրակթ, Անդամական Ժողովին ատենագրութիւնը,
քուէարկութեան համարեա արդիւնքը, Եկեղեցւոյս ընդհանուր ելեւմտական հաշուետը-
ւութիւնը եւ Առաջնորդարանէն ղրկուած հարցարանը՝ պատասխանուած:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ բարձր նկատողութեան եւ
կը սպասենք ընտրութեանց վաւերացման:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

Ի դիմաց ծխական Անդամական Ժողովի
խոնարհաբար՝


Տ. Աւետ Բախանայ Թէրզեան
Նախագահ

